

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ ԵՎ ՆԿԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ СООБЩЕНИЯ И ЗАМЕТКИ

ՍԱՀԱԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ (ԲԵՆՍԵ)

Կ. Վ. ՄԵԼԻՔ-ՓԱՇԱՅԱՆ

Լրացավ ականավոր ազգագրագետ, բանահավաք-բանասեր, մանկավարժ, հասարակական գործիչ Սահակ Մովսիսյանի ծննդյան 100-ամյակը։ Սահակ Մովսիսյանը ծնվել է 1867 թ. Արևմտյան Հայաստանում, Մուշի շրջանի Բուլանըխ գավառի Կոփ գյուղում, բանասաց Մովսեսի ընտանիքում։ Ս. Մովսիսյանը սկզբնական կրթությունն ստացել է իրենց գյուղի վանքի դպրոցում։ Դեռևս վաղ շրջանից իր ուսուցիչների հանձնարարությամբ պատանի Սահակը զբաղվել է բանահյուսական նյութեր հավաքելով։ Ուշագրավ է այն հանգամանքը, որ այդ դպրոցն այցելած Գ. Սրվանձտյանին Սահակը հանձնում է իր գրառած մանկական երգերի տետրը և արժանանում մեր բանահյուսության ու ազգագրության մեծ երախտավորի խրախուսանքին։ Այդ հանդիպումը կարևոր նշանակություն է ունենում Ս. Մովսիսյանի համար։ Այնուհետև նա ավելի մեծ եռանդով է զբաղվում հայրենի բառ ու բանի դրամամբ։

1879 թ. Ս. Մովսիսյանն ընդունվում է Մուշի ազգային կենտրոնական վարժարանը, որը ժամանակի լավագույն դպրոցներից մեկն էր և ուներ որակյալ մանկավարժական կազմ։ Այնտեղ դասավանդում էին Մ. Սարյանը, Պ. Թումանյանը և ուրիշներ։ 1884 թ. դպրոցն ավարտելուց հետո նա փորձում է ընդունվել էջմիածնի Դեորգյան ճեմարանը, սակայն մեծահասակ լինելու պատճառով մերժում է ստանում։ Վերադառնալով Բուլանըխ՝ Ս. Մովսիսյանն սկսում է զբաղվել ուսուցչությամբ, իրեն նվիրելով մանուկ սերնդի դաստիարակության գործին և հայ ազգագրության ու բանահյուսության ուսումնասիրությանը։

1896 թ. Ս. Մովսիսյանը մեկնում է Թիֆլիս, ուր շուտով բարեկամական հարաբերություններ է հաստատում Ղ. Աղայանի, Հ. Թումանյանի, Նար-Դոսի, Հ. Աղաբաբի, Ե. Հալալյանի և ուրիշների հետ։ Ս. Մովսիսյանի համար բախտորոշ նշանակություն է ունենում նրա ծանոթությունը ականավոր ազգագրագետ, բանագետ, հնագետ, «Ազգագրական հանդեսի» հիմնադիր Ե. Հալալյանի հետ։ Վերջինիս հանձնարարությամբ նա սկսում է գրել հայրենի գավառի ազգագրությունը։ Եվ ահա «Ազգագրական հանդեսի» 5-րդ և 6-րդ գրքերում, ապա 1901 թ. առանձին գրքով լույս է տեսնում Ս. Մովսիսյանի «Բուլանըխ կամ Հարք գավառ» արժեքավոր աշխատությունը Բենսե կեղծանվամբ։ Բուլանըխի ազգագրությունը չի ուսումնասիրված, այդ իսկ պատճառով այս գործը բացառիկ արժեք է ստանում։ Ս. Մովսիսյանը, հետևելով Ե. Հալալյանի ազգագրական դպրոցին, հանգամանորեն նկարագրում է բուլանըխցիների նիստուկադը, սովորությունները, հավատքը, նյութական մշակույթը և այլն։ Աշխատությունը կազմված է չորս բաժնից։ Տեղագրության բաժնում հեղինակը համառոտակի կանգ է առնում Բուլանըխի պատմական անցյալի վրա, ապա հանգամանորեն նկարագրում Բուլանըխի աշխարհագրական դիրքը՝ սահմանները, լեռները, լճերը,



կլիման, բուսականությունը, հանքերը, կենդանական աշխարհը, գյուղերը, սրբավայրերը, բերդերը, բնակարանը, անասնապահությունը, առևտուրը, Հատկապես հաջող է շարադրված գյուղատնտեսության բաժինը: Երկրորդ բաժինը կրում է «Ընտանեկան բարք» խորագիրը: Այստեղ խոսվում է հարսանիքի, տղաբերքի և կնունքի, երեխաների դաստիարակության, մանկական խաղերի և այլ հարցերի մասին: Այնուհետև հեղինակը կանգ է առնում ընտանեկան կյանքի և նրա մի շարք սովորոտ կողմերի վրա՝ ընտանեկան անախորժություններ, եղբարարածանություն և այլն: Այս բաժնում խոսվում է զանազան հիվանդությունների և նրանց բուժման միջոցների, ինչպես նաև մահվան, հոգու և հանդերձյալ կյանքի մասին: Նրբորդ բաժինն ամբողջովին նվիրված է հավատքին: Դա աշխատության ամենաարժեքավոր մասն է, ուր հեղինակը նկարագրում է կախարդության, սրբերի, երկնային լուսատուների (արև, լուսին, աստղեր), լեռների պաշտամունքի հետ կապված շատ սովորություններ: Այնուհետև անցնում է նշանավոր տոների (նոր տարի, տեառն-ընդառաջ, բարեկենդան, մեծ պաս, ծառղարդար, համբարձում և վարդավառ) նկարագրությանը: Զորրորդ բաժինը կրում է «Ժողովրդական երգեր» վերնագիրը: Այդտեղ գետնդրված են մանկական, աշխատանքային, երգիծական երգեր, սուածներ, հանելուկներ, առակներ: Այս բոլորը նա նկարագրում է հմուտ ազգագրագետի վարպետությամբ, բաց չթողնելով և ոչ մի մանրուք, որ կարող է գիտության համար կառնոր նշանակություն ունենալ: Ուշագրավ է այն հանգամանքը, որ հեղինակը նկարագրելով Բուլանիսի հայերի կենցաղը, նիստուկացը, սովորությունները, հավատալիքները, գուղահեռարսը տալիս է նաև քրդերին: Աշխատությունն ունի անհրաժեշտ ցուցադրական նյութեր, որ զգալիորեն բարձրացնում է ուսումնասիրության գիտական մակարդակը: Աշխատությունն արժանացավ գիտական հասարակայնության դրվատանքին և ստացավ «Սահակ — Մեսրոպյան» մրցանակ:

Այդ տարիներին Ս. Մովսիսյանն սմբարում է մեծ քանակությամբ ազգագրական և բանահյուսական նյութեր՝ հարյուրավոր հեքիաթներ, առակներ, ասացվածքներ և այլն:

Պատերազմի հետևանքով տեղափոխվելով Անդրկովկաս, Ս. Մովսիսյանը թղթակցում է Թիֆլիսում հրատարակվող «Համբավաբեր» շաբաթաթերթին, որտեղ մեկը մյուսի ետևից լույս են տեսնում նրա ուշագրավ հոդվածները: Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում նրա «Հնությունները Տաճկահայաստանում»¹ հոդվածը, ուր Ս. Մովսիսյանը, «Հորիզոնում» տպագրված հաղորդագրությունից տեղեկանալով, որ Հայոց ազգագրական ընկերությունը պատրաստվում է պեղումներ կատարել Մուշի շրջանում, առաջարկում է իր ծառայությունները որպես ուղեցույցի ապա նկարագրում է Մուշի հնությունները:

Քրդերի ազգագրությանն է վերաբերում Ս. Մովսիսյանի «Տուրուբերանի քրդությունը»² հոդվածը, ուր նկարագրվում են քրդերի նիստուկացը, սովորությունները, ամուսնության ձևերը, հարսանիքը, կրոնը և այլն: Ցավով պետք է նշել, որ նրա «Տուրուբերանի քրդերը» խորագիրը կրող մեծածավալ աշխատությունը կորել է:

Հայ ժողովրդի մեծ եղեռնի պատմությունը ուսումնասիրելու համար շափազանց արժեքավոր նյութեր կան Ս. Մովսիսյանի «Բուլանիսի կոտորածները»³ և «Մոտկան»⁴ հոդվածներում, ուր հեղինակը փաստերով ցույց է տալիս այն ահավոր դաժանությունները, որ կատարել են թուրքերը Բուլանիսում:

«Համբավաբերում» լույս են տեսել նաև Ս. Մովսիսյանի բանահյուսական բնույթի գործերը՝ «Շուշան իշխանուհին»⁵, «Վարդն ու լլրույր»⁶, «Ուկե կոռի»⁷ և «Վանեցի Քուչակը»⁸:

Ս. Մովսիսյանի բանահյուսական գործունեության պսակն են կազմում նրա գրառած բազմաթիվ հեքիաթները, որոնք հեղինակի որդու՝ բանաստեղծ, կուլտուրայի վաստակավոր գործիչ Սողոմոն Տարոնցու և Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հնագիտության և ազգագրության ինստիտուտի ջանքերով լույս տեսան 1967 թ., կազմելով «Հայ ժողովրդական հեքիաթների» ակադեմիական հրատարակության 10-րդ հատորը: Այս հատորն ընդգրկում է սլաոմական Հայաստանի Տուրուբերան նահանգի Հարք գավառի 273 հեքիաթները, որոնցից 269-ը հրա-

1 «Համբավաբեր», շաբաթաթերթ, Թիֆլիս, 1916, № 19, 20:

2 Նույն տեղում, № 32—35:

3 Նույն տեղում, № 12, 13, 43:

4 Նույն տեղում, № 40:

5 Նույն տեղում, № 10:

6 Նույն տեղում, 1917, № 3:

7 Նույն տեղում, № 7:

8 Նույն տեղում, № 13, 14:

տարակվում են առաջին անգամ. Հւստորին կցված են Ս. Մովսիսյանի կողմից դրած Մուշ-Բուլանըի բարբառի համառոտ քերականությունը և բարբառային բառարան: Այդ հեքիաթները կարևոր նյութ են տալիս ժողովրդի հոգևոր և նյութական մշակույթի ուսումնասիրության համար:

Ս. Մովսիսյանն ունի գրառած նաև հարյուրավոր առակներ, պարբերներ, հարսանեկան երգեր, աղոթքներ, սիրերգեր, մանկական երգախաղեր, հանելուկներ, հանգավոր առած-ասացվածքներ, թուրքերեն և քրդերեն երգեր ու վիպերգեր, որոնք դեռևս անտիպ են:

Ս. Մովսիսյանը բանահյուսական նյութերը հավաքում էր խիստ գիտական մեթոդներով, պահպանելով գրառման բոլոր անհրաժեշտ պայմանները: «Ժողովրդի բերանով՝ ժողովրդի մեջ տարածված երգերը (խաղեր) ունեն իրենց բազմաթիվ տարբերակները,— գրում է Ս. Մովսիսյանը,— որոնք մշտապես այլափոխման և զարգացման մեջ են: Ամեն ոք երգն ասում է ըստ իր հասկացողության, ճաշակի, տալով իրեն հաճելի բառապատկեր, գույն և ոգի: Ծս շատ երգեր եմ լսել, բայց աշխատել եմ ըստ իս գրի առնել լրիվը, կատարյալը, այսինքն՝ պահպանել նախ՝ տվյալ բարբառի ճշտությունը, երգի հիմքում ընկած հիմնական մոտիվը, չափի ու հանգերի կանոնավորությունը, որոնց խախտման և աղճատման հաճախ ենք հանդիպում բարբառը շփոթող անփութի ու անճաշակ բանահավաքների մոտ»⁹:

Հայկական ՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսության սեկտորի արխիվում են գտնվում Ս. Մովսիսյանի «Հիշողություններ Բուլանըի հայության հին և նոր կենցաղի մասին» աշխատությունը, ուր խոսվում է Բուլանըի հայ գյուղացու բնակարանի, հագուստի, ընտանիքի, ամուսնության, երեխաների դաստիարակության, ուսման, արհեստների, կրոնական հավատալիքների, ժողովրդական տոների և այլ հարցերի մասին: Վերջում որպես «ավելված կցված են մի քանի հեքիաթներ:

Ս. Մովսիսյանի չհրատարակված աշխատությունների մեջ առանձնակի տեղ է գրավում «Մուշ-Բուլանըի բարբառո» մեծածավալ ուսումնասիրությունը, որի վրա հեղինակն աշխատել է շուրջ քառորդ դար: Դա չ արժեքավոր մենագրություն է, որն անսպաժան պետք է տպագրվի:

Հայերի մեծ գոյություն ունեցող տոհմային հարաբերությունների վերապրուկներն ուսումնասիրելու տեսակետից ուշադրավ է Ս. Մովսիսյանի «Մեր տոհմի պատմությունը» աշխատությունը: Որոշակի հետաքրքրություն են ներկայացնում նաև Ս. Մովսիսյանի ձեռագիր հետևյալ աշխատությունները. «Վարդանը և Վասակը» պատմական ակնարկը, «Փյունիկյան Աստարտե դիցուհին քրդական թևան Դրմ-Դրմ» էպոսում», «Դիցաբանական տարրերը Մհերի էպոսում», «Դիցաբանական բառարան», «Հողային իրավունքը Մուշի աշխարհում» և այլն:

Ս. Մովսիսյանը գրադվել է նաև գրականությամբ: Դեռևս պատանի տարիներին հորինել է մի շարք բանաստեղծություններ: Ավելի ուշ գրում է պիեսներ՝ «Նունուլը» (1903 թ.), «Սարխոշները» (1908 թ.), «Մշեցոց հարսանիքը» (1924 թ.): Այս բոլորը գրված են Մուշ-Բուլանըի օարբառով, 1923—24 թթ. գրական մշակման է ենթարկել «Մամո և Զինեն»: Դրանցից և ոչ մեկը չի տպագրվել: 1903 թ. Կոփում և շրջակա գյուղերում հաջողությամբ բեմադրվում է նրա «Նունուլը» պիեսը, որի սյուժեն մանկահասակ աղջկա ապօրինի ամուսնությունն է, որտեղ մերկացվում են նաև թուրքական կաշառակեր պաշտոնյաներն ու սոցիալ հոգևորականների վարքը, այդ իսկ պատճառով պիեսի բեմադրությունը շուտով արգելվում է ոստիկանության կողմից:

Ս. Մովսիսյանը կատարել է նաև մի շարք թարգմանություններ. 1896 թ. լույս տեսավ նրա քրդերենից հայերենի փոխադրած «Լեյլի ու Մեջնունը» պոեմը¹⁰: Նա հայերեն է թարգմանել «Խան Դրմ-Դրմ» քրդական վիպերգը (կորած): Հովհաննես Բումանյանի «Շունն ու կատուն», Նղիշե Զարենցի «Լենինը և Ալին» թարգմանել է քրդերեն և այլն:

Շուրջ 50 տարի Ս. Մովսիսյանը գրադվեց մանկավարժությամբ և իր նշանակալից ավանդը ներդրեց այդ բնագավառում: 1884 թ. Մուշի Ազգային կենտրոնական վարժարանն ավարտելուց հետո նա մի քանի տարի ուսուցչություն է անում իր ծննդավայրում՝ Կոփ գյուղում: Ապա դասավանդում է Ալաշկերտի Ուլքիլիսեի ու Հովհաննես վանքին կից դպրոցում, որտեղից 1892 թ. փոխադրվում է Կոփ: Այստեղ նրան մեծ դժվարությամբ հաջողվում է դպրոց բացել, կառուցել տալ դպրոցի բավականին հարմարավետ շենք, հրավիրել մի քանի ուսուցիչներ: Դպրոցում սովորում էին ոչ միայն Կոփի երեխաները, այլև հարևան գյուղերի երեխաներն ու մեծահասակները: Դասավանդման ընթացքում արևմտահայերի համար գրված լավագույն դասագրքերի հետ միասին նա օգտագործում էր նաև Ղ. Աղայանի մայրենի լեզվի դասագիրքը, ապա:

9 Ս. Մովսիսյան, Տարոնի հայ ժողովրդական բանահյուսությունը (անտիպ), էջ 1:

10 «Նոր դար», Թիֆլիս, 1896, № 141—142:

Ստ. Լիսիցյանի, Հ. Թումանյանի, Լ. Շանթի կազմած «Լուսարեր» խորագրով հայոց լեզվի դասագրքերը:

1903 թ. Ս. Մովսիսյանը հրավիրվում է աշխատելու Խնուսի դպրոցում: Երկու տարի այդտեղ պաշտոնավարելուց հետո նա փոխադրվում է Կուփ դյուղի դպրոցը: 1908 թ. խորտակվում է սուլթան Արդուլ Համիդի արյունարբու տիրապետությունը, և որոշ նպաստավոր պայմաններ են առաջացնում դպրոցական գործի բարելավման համար: Օգտվելով դրանից՝ Ս. Մովսիսյանը հայքենի դպրոցը դարձնում է երկսեռ, և վերջապես բուլանդիյի գեղջկուհու առաջ բացվում են դրոշմի դռները: Դպրոցում սկսում են դասավանդվել հայոց պատմություն, քիմիա, ֆիզիկա և այլ առարկաներ, որոնք Արդուլ Համիդի ժամանակ արգելված էին:

1910 թ. լավագույն մանկավարժի և ուսումնական գործի գիտակի համրավ ստացած Ս. Մովսիսյանը հրավիրվում է դասավանդելու Բիթլիսի Կարմրակ Եկեղեցու կից դպրոցում, որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ, ուր աշխատում է մինչև 1913 թ.: Հակաթուրքական գործունեության համար Ս. Մովսիսյանը ձերբակալվում է, վեց ամիս բանտում նստելուց հետո ազատվում, սակայն զրկվում հայրենի գյուղում ապրելու հնարավորությունից: Նրան իրավունք են տալիս ընտանիքով ապրելու Արածանիի առափնյա քրդական գյուղերից մեկում, իհարկե ոստիկանության հսկողության ներքո: 1915 թ. Եղեռնից մազապուրծ եղած Ս. Մովսիսյանը ընտանիքով, Հ. Թումանյանի օգնությամբ հաստատվում է Մեծ Ղարաքիլիսա գյուղում և աշխատում տեղի դպրոցում որպես դասատու, միաժամանակ վարելով շրջանի գաղթականների համար կազմակերպված դպրոցների տեսչի պաշտոնը: Թուրքերի Կովկաս ներխուժելու պատճառով Ս. Մովսիսյանը փոխադրվում է Նոր Բայազետ և աշխատում տեղի որբաշուքում որպես դասատու: Ապա այնտեղից փոխադրվում է Լենինական, որտեղ մեծ եռանդով շարունակում է իր մանկավարժական գործունեությունը:

1925 թ. Լենինականի հասարակայնությունը նշում է նրա մանկավարժական գործունեության 30-ամյակը: Հայաստանի կառավարությունը, բարձր գնահատելով Ս. Մովսիսյանի գիտական-մանկավարժական գործունեությունը, 1930 թ. նրան անհատական թոշակ է նշանակում:

Ս. Մովսիսյանը տիրապետում էր մի քանի արևելյան լեզուների (պարսկերեն, թուրքերեն), հատկապես լավ գիտեր քրդերենը: Ս. Մովսիսյանը գրում է «Քրդերենի քերականություն», որն ամրապնդում է Հ. Օրբելու և Հ. Աճառյանի դրվադանքին և հրատարակվում 1935 թ.:

Ս. Մովսիսյանը մահացավ 1939 թ. նոյեմբերի 19-ին, Լենինական քաղաքում: